

Թեան մէ՛կ դերագոյն հովուապետի բարձրագոյն ճոխութեան ներքեւ :

Ոչ միայն կային հինաւորաց կաթողիկոսարաններ, որոնք կը պարծէին իրենց հինօրեայ ազատութիւններով եւ ինքնիշխան թեմերով, որոնց սահմանը օր աւուր ընդարձակել կը ձգտէին, այլ եւ կային — դեռ կենդանի — կաթողիկոսակիցներ, Դաւիթ եւ Սահակ : Դաւիթ, որ պարարտ ծերութեան մէջ կ'ապրէր առանձնացած ֆռնգիկան գիւղին մէջ, կը գտնուէր Նոր-Ջուղայեցւոց ազգեցութեան տակ, որոնք Մովսիսի պաշտպաններն էին . չունէր պատճառ խոչընդոտն յաբուցանելու Մովսիսի առջեւ :

Դժուարին եղաւ լռեցնել իւր փառասիրութեան մէջ վիրաւորուած Սահակ կաթողիկոսը, որ փախած Օսմանեան հողին վրայ ի Վասպուրական, կ'աշխատէր արժեցնել իր իրաւունքները գէթ օսմանեան տիրապետութեան տակ գտնուող ա՛յն ազգայիններու վրայ, որոնք դուրս էին Սոոյ եւ Աղթամարի թեմերէն եւ կը պատկանէին Էջմիածնի թեմին : Ինչպէս տեսանք վերագոյն, այս շատ վտանգաւոր ձեռնարկութեան առաջն առնելու համար ոչինչ խնայեց Մովսէս սիրով եւ խաղաղութեամբ զիջողութեան յորդորելու իւր հակառակորդը : Թէպէտ շատ ցաւալի եղաւ Սահակի պարտութիւնը, բայց խափանուեցաւ ասով Էջմիածնի թեմին երկիւղկումը :

Աղքատար : Մովսէս կաթողիկոսի նու-